ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2011թ. թիվ 6- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի թիվ 1138-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերով

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

20 հունվարի 2011թ.
ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 20.01 2011թ
թիվ 6-Ա որոշում

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ

| N | Միջոցառում | Պատասխանատու կատարող | Ժամանակացույց |
|---|---|---|---|
| 1. | Միջազգային առողջապահական կանոնների ներդրման միջոլորտային կառավարման նպատակով՝ մարզպետարանում մշակել և ներդնել «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով մշտական գործող միջոլորտային հանձնաժողով ձևավորելու, հանձնաժողովի գործունեության և Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի հետ փոխգործակցության կարգը հաստատելու մասին» մարզպետի որոշում՝ հիմք ընդունելով Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացրած օրինակելի կարգը՝ Հավելված 1. | Մարզպետարան<br><br>Պետական կառավարման մարմինների տարածքային կազմակերպություններ | 2011 թվական |
| 2. | Մարզպետարանում նշանակել Միջազգային առողջապահական կանոնների հարցերով պատասխանատու | Մարզպետի տեղակալ | ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138- Ն որոշմամբ սահմանված ժամկետում |
| 3. | ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի և շահագրգիռ մարմինների համագործակցության մեխանիզմները և համակարգման ընթացակարգերը հաստատելու մասին» N 1138 - Ն որոշման Հավելված 1-ի, 4-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացված օրինակելի ընթացակարգի հիման վրա, | Մարզպետարան<br><br>Միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմին | ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշմամբ սահմանված |

| | | | |
|---|---|---|---|
| | որոշման ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում մշակել և կառույցի ղեկավարի հրամանով ներդնել կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոններով պայմանավորված, այդ թվում՝ սննդի անվտանգության առնչվող դեպք արձանագրելիս Միջազգային առողջապահական կանոնների հարցերով պատասխանատուին հաղորդման ընթացակարգ: Ընթացակարգի նախագիծը համաձայնեցնել ազգային համակարգող մարմնի հետ և հաստատված փաստաթղթի կրկնօրինակը ներկայացնել ազգային համակարգող մարմին | | ժամկետում |
| 4. | Մշակել և գործադրել մարզում գործող կառույցների՝ Կանոնների վերաբերյալ իրազեկման ծրագիր-ժամանակացույց | Մարզպետարան<br><br>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններ | 2011-2012 թվականներ |
| 5 | Մարզային ենթակայության բուժկանխարգելիչ կազմակերպություններում ներդնել վարակիչ հիվանդությունների, թունավորումների, ճառագայթային ախտահարումների կանխարգելման վերաբերյալ Ազգային համակարգող մարմնի կողմից սահմանված կարգով ներկայացված իրավական ակտերը, մեթոդական փաստաթղթերը, շրջաբերական նամակները | Մարզպետարան | մշտապես՝ ներկայացնելու դեպքում |
| 6. | Մարզպետի հրամանով ներդնել Կանոնների Հավելված 1-ով և 2-ով ամրագրված սխեմաների կիրառումը՝ Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացված Առողջապահության նախարարության համակարգում կիրառման օրինակի հիման վրա | Մարզպետարան | 2011 թվական |
| 7 | Մարզպետարանում ձևավորել հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպքերի էլեկտրոնային բազա՝ հիմք ընդունելով Ազգային հաակարգող մարմնի կողմից ներկայացված օրինակելի ձևաչափը՝ Հավելված 2. | Մարզպետարան | 2012 թվական |
| 8 | Կազմակերպել և իրականացնել բազմոլորտ վարժանքներ՝ կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնով պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակների (այդ թվում՝ և միջազգային նշանակության) առաջացման սցենարով | Մարզպետարան<br><br>Պետական կառավարման մարմինների տարածքային մարմիններ | 2011-2012 թվականներ |
| 9 | Մշակել և ներդնել մարզի տարածքում գործող բուժկանխարգելիչ կազմակերպությունների, լաբորատորիաների, կլինիկաների ռեգիստր՝ համաձայն Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացված ձևաչափի և ռեգիստրում գրանցված հիմնարկների վերանայված ցանկը և կոնտակտային տվյալները մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը ներկայացնել Ազգային համակարգող մարմնին՝ | Մարզպետարան | 2011 թվական |

| | | | |
|---|---|---|---|
| | Հավելված 3. | | |
| 10 | Մշակել և ներդնել համաճարակների պատրաստվածության ընդհանուր ծրագիր՝ Ազգային համակարգող մարմնի կողմից սահմանված կարգով հաստատված ազգային ծրագրի հիման վրա | Մարզպետարան<br><br>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններ<br><br>Գյուղատնտեսության նախարարության տարածքային կառույցներ | 2011 թվական՝ Ազգային համակարգող մարմնի կողմից ներկայացնելուց հետո |
| 11 | Տվյալ մարզի տարածքում գործող սահմանային անցման կետերում /եթե տվյալ տարածքում առկա է անցակետ/ գործող սանիտարակարանտինային կետի հետ համագործակցված կազմել մարզի տարածքում տեղակայված այն բուժկանխարգելիչ կազմակերպությունների ցանկը, ուր պետք է տեղափոխվի սահմանում հայտնաբերված հիվանդը | Մարզպետարան<br><br>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններ | 2011 թվական |

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ

Cragir